**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

09.10.2020թ
Ե/336-2020

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ թիվ 01/107.3/00404-2020 գրությանը ներկայացնում ենք ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2020թ հոկտեմբերի 13-ին կայանալիք նիստի վերաբերյալ տեղեկացումը, ավագանու կայանալիք նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը՝ ըստ կից հավելվածների:

Առդիր՝ 9 էջ:

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ս. Կիրակոսյան

**ՏԵՂԵԿԱՑՈՒՄ**
**Սարահարթ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| **Համայնքը** | **Միջոցառման անվանումը** | **Օրը** | **Ժամը** | **Անցկացման վայրը** |
|---|---|---|---|---|
| **Սարահարթ** | Ավագանու հերթական նիստ | 13.10.2020թ | 15:00 | **Սարահարթի** համայնքապետարանի նիստերի դահլիճ (Սարահարթ համայնք 10փ 1նրբ. 12) |

# ՕՐԱԿԱՐԳ

1. Սարահարթ համայնքի 2020 թվականի երրորդ եռամսյակում բյուջեի կատարման հաղորդման մասին
2. Սարահարթ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի <<Սարահարթ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 54 -ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3. Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոխման մասին
4. Լոռու մարզի Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

**ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**2020Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԻՍՏԻ**
**ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2020թ հոկտեմբերի 13-ի նիստի օրակարգը:

1. Սարահարթ համայնքի 2020 թվականի երրորդ եռամսյակում բյուջեի կատարման հաղորդման մասին

/Զեկ. Ս. Կիրակոսյան/

2. Սարահարթ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի <<Սարահարթ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 54 -ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկ. Ս. Կիրակոսյան/

3. Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոխման մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

4. Լոռու մարզի Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Կիրակոսյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ, և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով՝ Սարահարթ համայնքի ավագանին

Որոշում է

1. Ի գիտություն ընդունել 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 54 -Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ս. Կիրակոսյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1.Սարահարթ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի << Սարահարթ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 54 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելումասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագնին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ 06-097-0127-0116 կադաստրային ծածկագրով 1.0866 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրից առանձնացված 0.9718հա մակերեսով հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

ՆԱԽԱԳԻԾ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 09-ի <<ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 52-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարահարթ համայնքի ավագանու
«13» հոկտեմբերի 2020 թվականի N 35 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Գալստյան Արմեն –երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
2. Սմոյան Սուսաննա – երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
3. Գալստյան Կարեն- քսանհինգ հազար դրամ, երեխայի ծննդյան գումար
4. Գալստյան Արեն- քսանհինգ հազար դրամ, երեխայի ծննդյան գումար
5. Հարությունյան Ազգանուշ- քսանհինգ հազար դրամ, երեխայի ծննդյան գումար
6. Նալբանդյան Կարապետ- քսան հազար դրամ, հարազատին կորցրած ընտանիքի օգնություն